

ՀՍԽՀ Լուսժողկոման  
Դպրոցական վարչություն

# ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎՈԶ ԼՐԻՎ ՅԵԼ ԼՐԻՎ ՄԻՋԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ 1933 Բ.  
ԾՐԱԳՐԵՐՈՎ ՅԵԼ ԱՏԱԲԻԼ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՎ 1934—35 ՈՒՍ. Տ.  
ԴԱՍԱՎԱՆԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԽԱԹԵՍՍՏԻԿԱ  
ՖԻԶԻԿԱ  
ԱՏՏՎԱՐԱՆԸՆԹԻԹՅՈՒՆ  
ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ  
ԵՎՈԼԵՈՒԹԻՈՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ  
ԵԵՐԿՐԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՔԻՄԻԿԱ

Հաստատված և ՀՍԽՀ Լուսժողկոմատի կողմից

Լ. Ա. Խ. Գ. Ա. Ր. Բ Հ Բ Ա. Տ  
ՅԵՐԵՎԱՆ 1934

ՍՐԱԿԱՐԴԻ Ա. ՍԻՐԱԿԵԼՅԱՆ

ՄԻԶՆԱԿԱՐԳ. ԴՊԲՈՑԻ 1934-35 ՈՒՍ. ՏԱՐՎԱ.  
ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԾՐԱԳՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ,  
ՑՈՒՑՈՒՄՆԵՐ\*)

Միջնակարգ դպրոցի մաթեմատիկալի ծրագրի հիմական թերությունը, ինչպես ցույց տվին առանձնակի կատարված հետազոտությունները, հանդիսանում են ըստ անրաբեռնվածությունը ուսումնական նյութով։ Այդ թերությունը վերացնելու նպատակով, 1934-35 ուս. տարվա համար անհրաժեշտ է վերադասավորել ուսումնական նյութն ըստ դասարանների, դեկավարվելով հետևյալ ցուցումներով։

Վ ԴԱՍԱՐԱՆ:

1934-35 ուս. տարվա համար Վ դասարանի քվարանության ծրագրից դուրս հանել հետևյալ 3 թեմաները։

- 1) Հարաբերություն և համեմատություն։ Մեծությունների մեջ լեզած կապակցությունը։
- 2) Տոկոսներ։
- 3) Տառապին արտահայտություններ։ Յերկրաչափությունից։ Վ դասարանի ծրագրից դուրս հանել հետևյալ հարցերը։
  - 1) 3-րդ պրակից (եջ 12) «Յեռանկյան մակերեսը հաշվելու բանաձևը։ Հաշվել ուղիղ խռանկյունի պրիզմայի ծավալը»։
  - 2) 4-րդ պրակից (եջ 13) «Շրջանի մակերեսը վրապես շրջանագծի լերկարության և շառավղի արտադրյալի կեսը»։

Վ դասարանի թարանության և լերկարչափության ծրագրի մյուս մասերը թողնել անփոփոխ։

\*) Դիտողությանները ակված են մանկավարժության դիմանետագուտության ինստիտուտում, ԲԱՖԱՀ Հունգկոմատի տվյալների հիման վրա։

Հանձնված և արտադրության 13 սեպտեմբերի 1934 թ.  
Սառագրված և տպագրելու 25 սեպտեմբերի 1934 թ.  
Գլուխի 494 (բ), պատվեր 1343, տիրաժ 1000

Դեմքատի տպարան, Յերևան



V դասարանի յերկրաչափությունն ուսումնասիրելիս պետք է նկատի ունենալ, վոր այդ դասընթացի հիմնական նպատակն ոժանդակել աշակերտներին՝ վորոշ քանակի յերկրաչափական փաստեր կուտակելու և պարզ պատկերացումների ու չափման վարժությունների հիման վրա վորոշ ունակություններ ձեռք բերելու գործում:

Ժամանակի որինակելի դասավարությունը V դասարանի համար ըստ ուս. տարվա (1934-35) ժառարդների\*):

#### I ՔԱՌՈՐԴ

- Յ կ ը ա ն ո ւ թ յ ո ւ ն  
 1. Ամբողջ թվերի գործողությունների կը կնություն Գործողությունների հատկությունները . . . . 38 ժամ:  
 2. Թվերի բաժանականությունը 16 ։  
 3. Հասորակ կոտորակներ:  
 Պաղափառ կոտորակի մասին 12 ։

66 ժամ

#### II ՔԱՌՈՐԴ

- Հ ա ս ա ր ա կ կ ո տ ո ր ա կ ն ե ր  
 1. Գումարում և հանում 20 ժամ  
 2. Տված թվի մասը գանել  
 Բազմապատկում . . . . 20 ։  
 3. Անհայտ թվի մասով գանել թիվը:  
 Կոտորակային թվերի բաժանման կանոնը . . . . . 9 ժ.

49 ժամ

#### III ՔԱՌՈՐԴ

- (վեցորյակում 3 ժամ)  
 1. Հասարակ կոտորակներ.  
 Բաժանում: Համատեղ գործողություններ կոտորակային թիվը . . . . . 18 ժամ  
 2. Տասնորդական կոտորակները (ներառյալ բազմապատկման գործողությունները) . . . . . 15 ժ.

33 ժամ

\*) Վեցամազընթերը կրնատ են արգած:

#### IV ՔԱՌՈՐԴ

1. Տասնորդական կոտորակներ  
 (վեցը) . . . . . 18 ժամ  
 2. Զանազան խնդիրների և որինակների լուծում հասարակ և տառնորդական կոտորակներով . . . . . 6 ժ.  
 ——————  
 24 ժամ

Ըստամենը . . . . . 200 ժամ

#### VI ԴԱՍԱՐԱՆ

VII դասարանի հանրահաշվի ծրագրից դուրս հանել հետեւյալ յերկու թեմաները:

1. Կոտորակալին հանրահաշվական արտահայտություններ միանդամ հայտարարներով:

2. Առաջին աստիճանի հավասարումների սիստեմ թվական գործակիցներով:

Նկատի ունենալով վոր անցյալ ուս. տարում V դասարանում թույլ են մշակված թվարանության ծրագրի վերջին բաժինները, այն եւ «Հարաբերություն և համեմատություն»: «Տոկոսները, «Տառային արտահայտություններ», 1934-35 ուս. տարվա համար այդ բաժինները մտցնել VI դասարանի ծրագրի մեջ, դրա համար առանձնացնելով 25-ից մինչև 30 ուս. ժամեր, կախված աշակերտների իրական պատրաստությունից:

VI դասարանի յերկրաչափության ծրագրից դուրս հանել հետեւյալ թեման:

#### 1. Քառանկյուններ:

Ժամերի թվերի որինակելի դասավարությունը VI դասարանում

Հ ա ն ը ա հ ա շ ի վ  
 (և թվարանություն):

Յ կ ը ա չ ա փ ո ւ թ յ ո ւ ն

#### I ՔԱՌՈՐԴ

1. Կրկնություն  
 ա) Հարաբերություն և համեմատություն . . . . . 8 ժամ  
 բ) Տոկոսներ: Խնդիրներ բոլոր գործողությունները վերաբերյալ տուային հաշվումներով . . . . . 10 ժ.



11-29924912

2. Հարաբերական թվեր (գործողությունները որևէքները) . . . . . 21 ժ.  
3. Տառային արտահայտություններ:  
Ամբողջ միասդամ և բաղման-  
դամ արտահայտություններ (մինչև  
բաղմապատկումը) . . . . . 16 ժ.

55 ժ.

## II ՔԱՌՈՐԴ

- (կեցորյակում 3 ժամ)
1. Ամբողջ միասդամ և բաղմանդամ  
արտահայտություններ . . . . . 24 ժ.

## III ՔԱՌՈՐԴ

- (կեցորյակում 2 ժամ)
1. Գործողություններ բաղմանդամ  
արտահայտությունների (կը կնու-  
թյուն . . . . . 6 ժ.  
2. Եռույնություններ և հավասարում-  
ներ . . . . . 16 ժ.

22 ժ.

## IV ՔԱՌՈՐԴ

- (կեցորյակում 2 ժամ)
1. Մեկ անհայտով տուաջին աստիճանի  
հավասարումների որինակների և  
խորհրների լուծում . . . . . 12 ժ.

Հնդամենը 180 ժ.

## VII ԴԱՍԱՐԱՆ

VII դասարանի հանրահաշվի ծրագրից դուրս հանել վերջին  
թեման «քառակուսի հավասարում»: Միաժամանակ VII դասարանի  
ծրագրի մեջ մտցնել «Եռաջին աստիճանի հավասարումների սխա-  
տեմը», վորն անցյալ ուս. տարում մասսայական դպրոցում լրիվ  
չի մշակված:

VII դասարանում հանրահաշվի դասընթացն ավելի հաջող  
լուրացնելու նպատակով անհրաժեշտ է.

(կեցորյակում 2 ժամ)

1. Ռւղիղ գիծ անկյուն | . . . . . 12 ժ.  
2. Յեռանկյունի (սկիզբ) . . . . . 4 ժ.  
16 ժ.

(կեցորյակում 3 ժամ)

1. Յեռանկյունի . . . . . 26 ժ.  
2. Զուգահեռ ուղղուներ . . . . . 7 ժ.  
33 ժ.

(կեցորյակում 3 ժամ)

1. Զուգահեռ գծեր . . . . . 12 ժ.  
2. Դասընթացի կրկնու-  
թյուն . . . . . 6 ժ.  
18 ժ.

ա) «Հանրահաշվական արտահայտությունները բաղմապատ-  
կիչների վերածելու» բաժինը ուսումնասիրելուց առաջ թվաբա-  
նության դասընթացից կրկնել՝ «թվերի բաժանականությունը»:  
թվերի ամենամեծ ընդհանուր բաժանարարը և ընդհանուր ամե-  
նափոքր բաղմապատիկը գտնելը: Կատորակային թվերի գործո-  
ղությունները»:

բ) «Բազմանդամ, գործակիցներով կոտորակալին հանրահաշ-  
վական արտահայտությունների գործողությունների» բաժինն  
ուսումնասիրելու կապակցությամբ IV դասարանի դասընթացից  
մտցնել «միանդամ հայտարարներով հանրահաշվական կոտորակ-  
ների գործողությունների» բաժնի կրկնությունը:

գ) «Համեմատական հատվածների» բաժինն ուսումնասիրե-  
լուց առաջ կրկնել յերկրաչափական համեմատությունը, համեմա-  
տության հիմնական հատկությունը, համեմատությունների լու-  
ծումը, հավասար հարաբերությունների հատկությունը և արտա-  
ծչալ համեմատությունը:

VII դասարանի լերկրաչափության ծրագրից դուրս հանել  
«Հավական առնչությունները» և դասընթացը ավարտել VI և  
VII դասարաններում ամբողջ անցածի կրկնությամբ, կրկնու-  
թյանը և խորհրների լուծմանը հատկացնելով մինչև 20 ժամ:

«Պատկերների մակերեսներ» թեման անցնելիս անհրաժեշտ  
ե ուսումնասիրել Պյութագորոսի թեորեմը, վորը շատ դպրոցնե-  
րում կամ չեն անցել, կամ անցել են պարզ ավացուցման լեզ-  
նակով:

Ժամերի որինակելի դասավորությունը VII դասարանում

Հանրահաշվի (2 ժամ կեցորդ)

I ՔԱՌՈՐԴ

1. Կրկնել. Թվերի բաժանականությունը:  
թվերի ամենամեծ ընդհանուր բա-  
ժանարարի և ամենափոքր ընդհա-  
նուր բաղմապատիկի գտնելը:  
կոտորակային թվերի գործողություն-  
ները . . . . . 6 ժ.
2. ա) Հանրահաշվային արտահայտու-  
թյունների վերածումը բաղմապատ-  
կիչների:

Երջանակիծ և շրջան:

Յերկրաչափական տեղեր 22 ժ.

3) Հանրահաշվական կոտորակների կըր-  
ճառումը . . . . . 16 ժ.

22 ժ.

## II ՔԱՌՈՐԴ

1. Գործողություններ հանրահաշվական  
կոտորակային արտահայտություններիւ  
Առաջին առաջմանի հավասարում տա-  
ռային գործակիցներով . . . . . 20 ժ.

## III ՔԱՌՈՐԴ

(վեցորյակում 3 ժամ)

1. Առաջին առաջմանի հավասարում տա-  
ռային գործակիցներով (վարժու-  
թյուններ) . . . . . 6 ժ.  
2. Հավասարությունների սխտեմ . . . . . 22 ժ.  
3. Քառակուսի արմատ հանելը (ամբող  
թից) . . . . . 5 ժ.

33 ժ.

## IV ՔԱՌՈՐԴ

(վեցորյակում 2 ժամ)

1. Քառակուսի արմատ հանել (մեր-  
ջը) . . . . . 8 ժ.  
Հավասարությունների որէնսկների և  
խնդիրների լուծում . . . . . 10 ժ.  
18 ժ.

Բնդամենը 108 ժ.

## VIII ԴԱՍԱՐԱՆ

VIII դասարանի հանրահայտի ծրագրից գույքս հանել յերկան-  
դամ և յեռանդամ հավասարությունների լուծումը:

Յերկանդամությունից VIII դասարանում ավարտել հարթա-  
չափությունը, VIII դասարանի ծրագրից գույքս հանելով տարա-  
ծաչափության բաժնի «Խողիղների և հարթությունների փոխա-  
դամ դիրքը տարածաչափության մեջ»:

Յեռանդամության ծրագիրը պարզել և տալ հետեւա-  
ծավալով:

Աղեղների և անկյունների չափումը: Սուրանկույն յեռան-

կունաչափական ֆունկցիաները (Տուր, Կօսա, Տցշ, Ծցշ): Միեւ-  
նույն և լրացուցիչ անկյան յեռանկյունաչափական ֆունկցիա-  
ների փոխադամ կապը: Ուղղանկյուն յեռանկյունների լուծումը  
(Թըրակինի ստարիլդասագրքով §§ 1—22), բացառյալ Տեսա և Կօսեա  
ֆունկցիաների բաժնից:

Հարթաչափության դասընթացից աշակերտների գիտելիք-  
ներն ամրացնելու նպատակով VIII դասարանում ամբողջ առա-  
ջին քառորդը պետք և հատկացնել հարթաչափության ամենա-  
գլխավոր հարցերի կրկնությանը և հետեւալ թեորեմների ապա-  
ցուցմանը՝ հավասարասրուն յեռանկյան հատկությունների թեո-  
րեմը, յեռանկյունների հավասարության նշանների թեորեմը,  
զուգահեռակղմի ու ուղղանկյունու անկյունագծերի հատկու-  
թյունների թեորեմը, շեղանկյան հատկությունների թեորեմը,  
լարին ուղղանայց տրամագծի հատկության թեորեմը, այն  
թեորեմը, վոր մեկ ուղիղի վրա չգտնվող յերեք կետերով կարե-  
լի ին տանել մեկ շրջանագիծ, անկյան կողմերը հատող գուգա-  
հեռ ուղիղների հատկությունների թեորեմը. ուղղանկյուն յեռան-  
կյան ելեմենտների մեջ յեղած չափական առնչությունների 1, 2  
և 3 թեորեմները. հակադարձ թեորեմն այն մասին, վոր «յեռան-  
կյան մեջ հավասար անկյունների զիմաց գանվում են հավասար  
կողմերը», հակադարձ թեորեմը «յեթե անկյան կողմերը հատ-  
վում են յերկու ուղիղներով և մի կողմի յերկու հատվածների  
հարաբերությունը հավասար ե մյուս կողմի հատվածների հարա-  
բերությանը և այլն»: Հարթաչափության մնացած մասը պետք  
ե կրկնել առանց թեորեմներն ասլացուցելու, Վրկնելիս խնդիր-  
ներ լուծել:

1) Կից և հակադարձ անկյունների հատկությունները (եջ  
6, խնդիրներ՝ 17, 18, 21, 22, 23, 33, 37 ուսուական դասա-  
գրքով):

2) Յեռանկյունների հավասարության հատկանիշները:  
Յեռանկյան կողմերի և անկյունների փոխադարձ կախումը (եջ  
9, խնդիրներ՝ 18, 22, 38, 39, 42 ուսուական դասագրքով):

3) Յերկու ուղիղների զուգահեռության հատկանիշները: Զու-  
գահեռներին կից անկյունները: Յեռանկյան անկյունների զու-  
գահեռը (եջ 12, խնդիրներ՝ 6, 7, 8, 11, 12, 20 ուսուական դասա-  
գրքով):

4. Յեւանկյան արտաքին անկյան հատկութիւնը։ Բաղմանկյան անկյունների գումարը (եջ 15, խնդիրներ՝ 29, 30, 34, 57 սուսակյան դասագրքով):

5. Զուգահեռակողմ (Եջ 181, խնդիրներ 7, 10, 13, եջ 17,  
խնդ. 2, 4, 17 ուստակ. դասադրքով):

6. Աւղանկյունի: Շեղանկյունի (հջ 19, խոդիբռեր՝ 20, 21, 23, 27, 28, 30, 41 ռուսական դասագրքով):

7. Աւղանկյան միջին գծի հատկությունը. Սեղաններ (հջ 22, խնդիրներ՝ 55, 61, 66, 70, 73, 77, 80 ուսւ. դասագրքով):

8. Քառակիւսու ուղղանկյան, զուգահեռակողմի մակերեսները (եջ 71, խնդիրներ՝ 9, 10, 11, 16, 19, 21, 28 ուսական դաստիք):

9. Յեռանկյան, սեղանի մակերեսները (եջ 73, խնդիրներ՝ 41, 42, 45, 60, 63, 71 ոռւս, դասագրքով):

10. Հիմնական էերկրաչափական տեղերը: Երջագծի աղեղների և լաբերի հատկությունները (եջ 88, խնդիրներ՝ 77, 78, 82, 84 ռուս. դաստիքը):

11. Անկյունների չափումը շրջանում ( $b_2$  32, խնդիրներ՝ 10, 15, 20, 44, 48, 49 սռամկ. դասագրքով):

12. Համեմատական հատվածների թեորեմներ (եջ 38, խնդիրներ՝ 3, 6, 7, 17, 18 սուսակ. դասագրքով):

13, 14. Յեռանկյունիների նմանությունը (հջ 42, խնդիրներ՝ 2, 8, 14, 15, 24 և հջ 45, խնդիրներ՝ 26, 27, 31, 38, 43 ուսու. դասագրքով):

15. Զափական առնչություններ ուղղանկուն լեռանկյան  
մեջ (եջ 48, ինպիրներ՝ 7, 8, 21, 23, 25, 27 լեռնիրներից մեկը):

16. Զափական առնչություններ շրջանում (եջ 59, խնդիրներ  
1, 6, 14, 19, 20, 33, 34 սուս. դասագրքով):

VIII դասարանի աշակերտների հետ հարթաչափության անցած դասընթացը վերոհիշված ձևով կը կնելիս, պետք է ծրագրի համաձայն, ավարտել հարթաչափության սիստեմատիկ դասընթացն այն հաշվով, վոր IX դասարանում անցնեն տարածաչափության դասընթացի ուսումնասիրությանը:

Ժամերի սրբագրելի դասավորությունը VIII դաստիառամ

<p><b>I ՔԱՌՈՐԴ</b></p> <p>(վեցորյակում 2 ժամ)</p> <p>1. Նույնական ձեռափոխությունները աստիճանների և աբօմատների նկատմամբ . . . . . 20 ժ.</p>	<p><b>II ՔԱՌՈՐԴ</b></p> <p>1. Քառակուսի հավասարությունների տեսակների և գործնական լուսաւում . . . . . 14 ժ.</p>	<p><b>III ՔԱՌՈՐԴ</b></p> <p>(վեցորյակում 3 ժամ)</p> <p>1. Գունակցիաներ և նրանց գրաքինները . . . . . 12 ժ.</p> <p>2. Յերկառակուսի (բիկվազբատ) և իրացցիոնալ հավասարումներ . . . . . 12 ժ.</p> <p>Յերկանդամ և յեռանց գամ հավասարումներ . . . . . 9 ժ.</p>
		<p><b>ՅԵՐԿԱՆԴԱՄ</b></p> <p>(վեցորյակում 2 ժամ)</p> <p>1. Յարթաչափության գաղափառները կրկնությունների և արտագաղափառների համար . . . . . 20 ժ.</p>
		<p><b>ՆԵՐԿԱՆԴԱՄ</b></p> <p>1. Ներկանդամ և արտագաղափառների հաղթանակությունները 14 ժ.</p>
		<p><b>ՎԵՐԿԱՆԴԱՄ</b></p> <p>(վեցորյակում 1 ժամ)</p> <p>1. Սուրանկան յեռանց կյունաշափական ֆունկցիաները. նրանց փոխազարձ կապը . . . . . 11 ժ.</p>

IX ԴԱՍԱՐԱՆ

- 1934-35 տարում IX դասարանի ծրագրից հանվում են՝  
ա) Հանրահաշվից՝  
1. Անհավասարությունները.

2. Հավասարութիւնների հետազոտությունը.  
 3. Անորոշ հավասարութիւնները:  
 բ) Յերկրաչափությունից՝  
 1. Կողմ մարմինները.  
 գ) Յեռանկառաչափությունից՝  
 1. Հակադարձ շրջանային ֆունկցիաները:

### Փամերի որինակելի դաշտվորությունը IX դասարանում

Հանքանաշաբաթ  
(կեցոյակում 2 ժամ) I ՔԱՌՈՐԴ

1. Պրոդեսսուիաններ . . . . . 12 ժամ  
2. Աստիճանացույցի հասկացողության ընդհանուրացումը . . . . . 5 ժ.

Յերկրաշաբաթ  
(կեցոյակում 1 ժամ)

Տարածաշաբաթ  
թյուններն 12 ժամ  
1. Կողմիներ՝ «Ուղիղների և հարթությունների փոխադարձ դիրքը տարածության մեջ 9 ժ.

### II ՔԱՌՈՐԴ

1. Յուցիչային և լուսարիթմական փունկցիաներ:  
Տամորդական լուսարիթմներ (դրական խառապեականի կառակարգություն) 14 ժ.

### III ՔԱՌՈՐԴ

1. Լուսարիթմումը (վերջ) բարդ տոկոսներ . . . . . 14 ժ.  
2. Միացումների տեսություններ C<sup>n</sup><sub>m</sub> = C<sup>m-n</sup><sub>m</sub> հավասարությունը 6 ժ.

20 ժամ

Յերկրաշաբաթ  
թյուններն 10 ժամ  
(կեցոյակում 2 ժամ)

Տարածաշաբաթ  
թյուններն 10 ժամ  
1. Կողմիներ՝ Յեռանկառաչափական փոխականությունների հիման վրա կատարեած գործությունը և նրանց փոխադարձ կապը: Անկյան դադարի բնորոշումը:

2. Անկյունների գործարի և տարբերության յեռանկառաչափական փունկցիաները . . . . . 17 ժամ

1. Բազմանկուտեր պրիզմայի մակերեսույթը . . . . . 8 ժ.  
2. Կողմակի և կեռ անկյան փունկցիաների Գումարի և տարբերության ձևափոխումը: Աժանդական ներկյան ներմուծման որինակները . . . . . 14 ժամ

1. Լուսի և հատած պիրամիդի մակերեսը: Պրիզմի և պիրամիդի ծավալը 7 ժ.  
2. Յեռանկառների լուծումը . . . . . 12 ժ.

18 ժամ

### IV ՔԱՌՈՐԴ

3. Միացումներ (վերջը): Նյուտոնի բինոմը:  
Կողմություն . . . . . 10 ժ.

1. Հատած պիրամիդի ծավալը:  
Կողմություն . . . . . 6 ժ.

2. Յերկրաչափական բովանդակությունների ունեցող որինակների և խընդիրների լուծումը 10 ժ

Հ ն դ ա մ ե ն ը 150 ժամ

### X ԴԱՍԱՐԱՆ

X դասարանի ծրագրից հանել «Անալիտիկ յերկրաչափության հիմունքները»: «Անկերջ փոքրերի անալիզի հիմունքները»:

X դասարանի ծրագիրը առաջարկվում է հետեւյալ ձևով:

### ՀԱՆՐԱՀԱՇԻՎ

Հավասարությունների լեկ անհավասարությունների լուծման տեսությունը լեկ պակասիկան

### Հ ա վ ա ս ա ր ո ւ մ ն ե ր

1. Տառային և թվական հավասարություններ: Նույնություններ և հավասարություններ: Հավասարությունների կլասսիֆիկացիան՝ հանրահաշվական և տրանսցենդենտ: Հավասարումը, վորպես ֆունկցիոնալ կախում: Հավասարագոր հավասարություններ: Հավասարությունների ձևափոխումը նրանց հավասարագորների հավասարությունների հիման վրա: Անհավասարագորների հիման վրա: Հավասարություններ հավասարություններ ստանալը հավասարությունների յերկու կողմերն անհայտ պարունակող արտահայտությամբ բազմապատկերով և հավասարման յերկու կողմերը ամբողջ և դրական աստիճան բարձրացնելով:

2. Կոորդինատների մեթոդը: Գծային փունկցիա և նրա գրաֆիկը (գծային փունկցիայի մասնավոր դեպքը — ուղիղ համեմատականությունը):

3. Մեկ անհայտով առաջին աստիճանի հավասարման լուծումների հետազոտությունը և տառային տվյալներով, կոնկրետ խնդիրներով: Դրական լուծում՝ զերոյական, անվերջ և անորոշ: ax + b = 0 հավասարման զանազան լուծումների յերկրաչափական պարզաբանումը:

## ԱՆՀԱՎԱՍԱՐՈւԹՅՈՒՆՆԵՐ

4. Առաջին աստիճանի անհավասարությունները: Անհավասարությունների հատկությունները: Մեկ անհավասարության մեկ անհավասարության լուծումը:

### ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՄԷՐ

5. Հավասարումների սխստեմները: Հավասարագոր հավասարումների սխստեմները: Առաջին աստիճանի յերկանհայտ յերկու հավասարումների սխստեմի արմատների յերկրաչափական նշանակությունը: Առաջին աստիճանի յերկանհայտ հավասարումների սխստեմի արմատների հետազոտությունը: Արմատների տիպերը՝ սահման ունեցող և վորոշ մի զույգ արմատներ, բազմաթիվ արմատներ (անորոշ սխստեմներ), սխստեմն արմատներ չունի, անլուծելի յեւ (անհամատելի հավասարումներ):

Այս բոլոր տիպերի արմատների յերկրաչափական իմաստը:

### ԱՆՈՐՈՇ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6. Ամբողջ թվերով անորոշ հավասարման լուծման հնարավորության պայմանները: Զույգ ամերող արմատները հաջորդական բաժանումով և ընտրությամբ գտնելը: Ամբողջ թվերով լուծման ընդհանուր ֆորմուլաները: Ամբողջ և զրական արմատներ գտնելը:

7. Կեղծ և կոմպլեքս թվերը և նրանց գործողությունները:

### ՔԱռԱԿՈՒՍԻ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8. Քառակուսի ֆունկցիա, նրա գրաֆիկը: Մեկ անհայտ հավասարման լուծման հետազոտությունը: Դիսկրիմինանու: Քառակուսի հավասարման մասնավոր գեղքերի հետազոտությունը: 1)  $c=0$ , 2)  $b=0$ , 3)  $b=0$ , և  $c=0$ , 4)  $a=0$  իրական, կեղծ և հավասար արմատների յերկրաչափական նշանակությունը:

Յերկրորդ աստիճանի լեռանդամի հատկությունները և նրա վերլուծումը գծալին արտադրիչների:

ԻՐԱԳԻՌՈՆԱԼ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԲԱՐՁՐԱՄԱՏԻ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

9. Իրացիոնալ հավասարումներ: Կողմանակի արմատներ: Յերկանդամ և յեռանդամ հավասարումներ:

10. Յերկրորդ աստիճանի հանրահաշվական հավասարման ընդհանուր տեսքը: Կոշիի (Դառլի) թեորեմը կամավոր աստիճանի հավասարման արմատների գոյության մասին: Թեորեմ՝ ամբողջ հանրահաշվական բազմանդամը ( $x^m - a^n$ ) յերկանդամի վրա բաժանելու մասին: Բեզուի թեորեմը և նրա կիրառումները  $x^{m-a^n}$  յերկանդամը  $x^{\pm a - b}$  վրա բաժանելու վերաբերյալ: Բարձր աստիճանի հավասարումների լուծումը նրանց ձախ կողմերն արտադրիչների վերլուծելու ինդանակով:

### ՅՈՒԳԻՉԱՅԻՆ և ԼՊԳԱՐԻԹՄԱԿԱՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

11. Ցուցիչային և լոգարիթմական ֆունկցիաներ, սրանց հատկությունները և գրաֆիկները: Ցուցիչային հավասարումների լուծումը, լոգարիթման իջղանակը, հիմքերի հավասարեցման իջղանակը, անհայտների փոխարինման իջղանակը:

Լոգարիթմական հավասարումների լուծումը:

### ՅԵՐԿՐԱՋԱՓՈԽԻԹՅՈՒՆ

#### 1. Սահմանելու տեսությունը

Հաստատուն և փոփոխական մեծություններ: Անվերջ փոքր և անվերջ մեծ մեծություններ: Սահման ունեցող փոփոխական մեծություններ: Անվերջ փոքր մեծությունների որինակներ ( $\gamma$  շանում ներգծած կանոնավոր բազմանկյան ու կողմի յերկարությունը նրա կողմերի թվի անվերջ աճելու գեղքում, անվերջ նվազող յերկրաչափական պրոգրեսիայի 11-րդ անդամի մեծությունը): Անվերջ մասը մեծությունների հետ կատարվող գործողությունների հիմնական թեորեմները: Սահմանի գաղափարը: (Կանոնավոր բազմանկյան անկյան և կանոնավոր բազմանկյան ապոֆիմի մեծության սահմանը կողմերի թվի անվերջ մեծանալու գեղքում):

Անվերջ նվազող յերկրաչափական պրոգրեսիայի անդամների գումարի սահմանը: Պարզ և խառը պարբերական կոտորակներ: Հիմնական թեորեմներ սահմանների մասին (ապացուցումը սահմանավակել անվերջ մասը մեծությունների սահմանափակ թվի անգամների գումարի սահմանի թեորեմով (տես հանրահաշիվ ուսիրեն գասագիրք մաս II, § 182 (160), եջ 175):

2. Սահմանների տեսության կիրառումը յեղաշափության մեջ

Ծրջանագծի յերկարության, ըլջանի մակերեսի, պիրամիդի  
ծավալի, գլանի, կոնի մակերեսույթի և ծավալի, գնդի և նրա մա-  
սերի մակերեսույթի և ծավալի ֆորմուլան դուրս բերելը սահման-  
ների տեսության հիման վրա, խնդիրների լուծում:

### Յ. Կառուցման խնդիրների լուծում

- ա) Յերկաչափական տեղերի մեթոդը.  
 բ) Նմանության մեթոդը.  
 գ) Հանրահաշվական արտահայտությունների կառուցման  
 ահաշվական մեթոդը, մասնավորապես քառակուսի հակա-  
 ման արձատների կառուցումը:

8 ուցում. — Աշակերտների հետ կառուցման խնդիրները ցույց տված մեթոդներով լուծելիս, դասատուն կարող ե ոգտվել հրատարակվող լերկրաչափական մեթոդիկայից կարելի լեռոգ-տագործել «Տերք»-ի լերկրաչափական խնդիրները կառուցմամբ լուծելու պրինցիպները, Պետհրատ, Մոսկվա, 1932 թ.\*): Դասատուի համար վորպես ոժանդակ ձեռնարկ, կարող ե ծառայել «Ալեք-սանդրով»-ի կառուցման լերկրաչափական խնդիրներ. Պետհրատ, 1934 թ.

ՅԵՐԱՆԿՅՈՒՆԱԳԱՓՈՒԹՅՈՒՆ

1. Հակաղարձ շրջանալիին Փունկցիաներ.
  2. Յեռանկյունաչափական հավասարումների լուծում:
  3. Յերրաչափական խնդիրների լուծումը յեռանկյունաչափական հավասարումների լուծումը:

Յուղում. Սատրիլ ձեռնարկում և խնդրագրքում կան համապատասխան բաժիններ. դաստիառն կարող է լրացնել լուծվող յեռանկյունահամակարգը խնդրիների թիվը:

ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թվերի ընական շարքը: Թվարկության տասնորդական սիմտեմը: Թվարկության ալլ սիմտեմների գաղափարը:
  2. Ամբողջ թվերի հետ կատարվող թվաբանական գործողու-

\*) *Սիցնակարգ պարուղներ*: Համար:

թյունների հիմնական որենքները և նրանց կիրառումը գրավոր և բանավոր գործողությունների ժամանակի:

3. Թվերի բաժանականությունը: Էնդանուր ամենամեծ  
բաժանաբարը և ընդհանուր ամենափոքը բազմապատիկը:

4. Թվի գաղափարի ընդարձակումն՝ կոտորակային, բացասական, իրացիոնալ և կոմպլեքս հակադարձ գործողությունները կատարելու հնարյավորության բոլոր գեպքերի տարածման միջոցով:

Իրացիոնալ թիվը վորպես նրա մոտավոր նշանակություն-ների սահմանը, վորոնք վորոշված են միւնույն, բայց կամավոր առաջանի ճշգրիտամբ:


Գործողությունների որենքների հաստատությունը թվի գաղափարի ընդարձակման գեպօռմ:

5. Միանիշ համապատասխանությունը թվի և կետի մեջ  
թվական առանցքի վրա: Կոմպլեքս թվի լեռկրաչափական պատ-  
կերացումը:

Ցուցում.—Վերևում պարզված են թվաբանության կըրկնելու գասընթացի նպատակները։ Համապատասխան դասագիրք չկա։ Սակայն X դասարանի ուսուցիչը գրված բոլոր հարցերը կդանի թե թվաբանության դասագրքում (համաշափելի թիվ) և թե հանրահաշվի դասագրքում (հարաբերական, իրացիոնալ և կոմպութես թիվ)։

Ժամանակի որբնակելի դասավորումը X դասարանի համար  
1934-35 ուս. տարում

<b>Թվաբանու-</b>		<b>Յ ե կ ը ա չ ա -</b>	<b>Յ ե ռ ա ն կ յ ո ւ ն ա -</b>
թյուն	չ ա ն ը ա հ ա շ ի վ	փ ո ւ թ յ ո ւ ն	չ ա փ ո ւ թ յ ո ւ ն
1 պ լ լ լ լ լ լ ի	չ ա վ ա ս ա ր ո ւ մ ն ե ր ի և ա մ ն - հ ա վ ա ս ա ր ո ւ թ յ ո ւ ն ե ր ի տ ե ս ո ւ թ յ ո ւ ն ը և պ ր ա կ - տ ի կ ա ն :	1. Ս ա հ մ ա ն ն ե ր ի տ ե ս ո ւ թ յ ո ւ ն ը: Ս ա հ մ ա ն ն ե ր ի տ ե - ս ո ւ թ յ ա ն կ ի ր ա -	1. Յ ե ռ ա ն կ յ ո ւ ն ա - չ ա փ ա կ ա ն հ ա վ ա ս ա - Ս ա կ ա մ ը . . . 11 ժ ա մ
	1. Ա ռ ա ջ ի ն ա ս ա լ ի հ ա ն ի հ ա վ ա ս ա ր ո ւ մ ն ե ր ը:	ս ո ւ թ յ ա ն կ ի ր ա - ս ո ւ թ յ ա ն կ ի ր ա -	
	2. Ա ն հ ա վ ա ս ա ր ո ւ թ յ ա ն - ն ե ր ի:	ս ո ւ թ յ ա ն կ ի ր ա - ս ո ւ թ յ ա ն կ ի ր ա -	
	3. Հ ա վ ա ս ա ր ո ւ մ ն ե ր ի ս ո ւ թ յ ա ն կ ի ր ա -	22 ժ ա մ	



## II ՔԱՌԱՐԴ

1. Անդրոշ համառարութեան	1. Յերկրաչափական ինդիքսների լուծում յիշավագիր կունկցիան	1. Հակադարձ շըր-
2. Բնդիքաղը առ առնելու մասին համապատասխան ներ	2. Բնդիքաղը առ առնելու մասին համապատասխան ներ	շանային փունկցիան ներ . . . . . 8 ժամ
3. Հակադարձ շըր առ առնելու մասին համապատասխան ներ	4. Հակադարձ շըր առ առնելու մասին համապատասխան ներ	կիրառումով . . . 16 ժամ

## III ՔԱՌԱՐԴ

1. Թիկի բնական շարքը: Թիվարկութափառարութեան մասին ներ	1. Իրացիոնալ համապատասխան մասին ներ	1. Խոդիքների լուծում յիշանկցունական մասին ներ
2. Թործողությունների հավասարութեան մասին ներ	2. Թործողությունների հավասարութեան մասին ներ	ծում շափության կիրառումով . . . 11 ժամ
3. Թիկի բաժանությանը:	3. Կառուցման մասին ներ	շափության կիրառումով . . . 11 ժամ
4. Ընդհանուր ամենամեծ բաժանությանը:	4. Կառուցման մասին ներ	4. Խոդիքների լուծում յիշանկցունական մասին ներ
5. Թիկի բաժանությանը:	5. Կառուցման մասին ներ	5. Խոդիքների լուծում յիշանկցունական մասին ներ

## IV ՔԱՌԱՐԴ

1. Թիկի գաղափառ 1. Ցուցիչային և թիվաբանական ինդիքսների լոգարիթմական մասին ներ	1. Կառուցման մասին ներ
2. Թիկի պատկերաց համապատասխան մասին ներ	2. Պատմապատճենումը . . . 6 ժամ ներ . . . . . 12 ժամ

Հ Ա Գ Ա Մ Կ Ա Ը 180 ժամ

## ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1934-35 ուսումնական տարվա Ֆիզիկայի յեվ աստղաբաշխության  
ծրագրերի վերաբերյալ

V դասարանից հանվում են ֆիզիկայի դասընթացը:  
Միջնակարգ դպրոցում ֆիզիկայի ուսումնասիրությունը  
սկսվում է VI դասարանից:

## VI ԴԱՍԱՐԱՆ

(Վեցօրյակում 3 ժամ)

### I ՄԵԽԱՆԻԿԱ

1. Գաղափառ շարժման մասին.—թողնել անփոփոխ:
2. Հավասարաչափ ուղղագիծ շարժում:
3. Հանել՝ «Հավասարաչափ ուղղագիծ շարժման արագության և ճանապարհի գրաֆիկը»:  
«Գնացքների շարժման գրաֆիկը»:
4. Նյուտոնի առաջն ուժներ. — Վերջին նախադասության վերջին «ըրամ» բառը ջնջել, թողնել մասսայի միավոր:
5. Նյուտոնի յերկրորդ ուժներ:
6. Վեցերորդ աեղը դնել ծրագրի 11-րդ հարցը—«Հիման ուժը»:  
Լարուառը աշխատանքի թեման այսպես փոխել.  
«Հիման որենքների ուսումնասիրությունը»:
7. Ցոթերորդ աեղը դնել ծրագրի 8-րդ հարցը: «Աշխատանք և հղորություն»:
8. Ութերորդ աեղը դնել ծրագրի 10-րդ հարցը: «Գաղափար եներգիայի մասին»:  
Վորպես ուսումնասիրության համար պարտադիր թեմա  
10-րդ հատվածից հանել՝ «Հավիտենական շարժիչի պրոբլեմը», թողնելով միայն ծանոթանալու նպատակով: Ուսումնասիրության համար թողնել «Հներգիայի պահպանության պրենքը»:
9. Իններորդ աեղը դնել ծրագրի 9-րդ հարցը «Հորժումների փոխանցում»:
10. Փոկ յեվ փոկանիվ. — Այս բանմից միայն ուսումնասիրվում են «փոկանիվ և ատամնափոր անիմերով փոխանցումը»:  
այս հատվածի մնացած նյութը ավանդվում են վորպես տեղեկություն: (Սահմանափակվել միայն մի զույգ անիմերով):

11. Տասնմեկերորդ տեղը դնել նախկին 7-րը, միայն գուբր հանելով կենտրոնախույս մեքենաների որինակները:
12. Նախկին 6-րդ հատվածը «ուղիղ գծով և անկյուն կազմող ուժերի գումարումը» գուրա և հանգում:

## II ԶԵՐՄՈՒԹՅՈՒՆ

«Զերմության» բաժինը պետք է ուսումնասիրել սկսած ծրագրի յերկրորդ հարցից, հետեւալ բովանդակությամբ:

1. Գաղափար մոլեկուլային-կինետիկ տեսուրյան մասին. — Դի-ֆուզիայի յերկություն՝ պինդ, հեղուկ և գազային մարմիններում ֆազերի ճնշումը, վորպես հիտեսանք մոլեկուլների հարվածների բոլոր մեջ որենքը, Դուրս հանել Գերայուսակի որենքը:

2. Յերկրորդ տեղը զրվում է 1-ին հարցը «Զերմային եներգիա»:

3. Յերրորդ տեղը դնել «Զերմության վիխանցումը»: — Զրի սառցածան կորագիծը կազմելու լարորատորական աշխատանքը անդախոխել այս բաժինը, նրան միացնելով նախատարինի հալման և պնդացման ջերմաստիճանների հաստատությունը վորոշող լարորատորական աշխատանքը: Կարիք չկա մանրամասն ուսումնասիրել ծրագրում բերված բոլոր որինակները:

«Վասելիքը բացիոնալ ձեռվ այրելու պայքարը մեր արդյունաբերության մեջ». պետք է տալ վորպես տեղեկություն:

4. Զերմային եներգիաի չափումը:

5. Զերմունակություն ինչ տեսակարար ջերմայրյուն:

Յերկու հատվածներն ել թողնել անփոփոխ:

6. Նյութի արեգատային վիճակի փոփոխությունը: Հանել «մետաղների հատկությունները տաքանալիս փոխվելու» հարցը: Տեղեկության կարգով տալ «մետաղամշակման ժամանակ ջերմային հներգիայի ոգտագործումը, ջրախողովակային կաթսաներ»:

7. Մեխանիկական եներգիայի ձերմայինի:

Դիտողություն. — Բոլոր հաշիվները պետք են պարզ լինեն, սկսած շոգեառությունից մինչև բաժնի վերջը, բոլոր հարցերը պետք են անցնել տեղեկության կարգով:

8. Ակուսիկա (ձայն):

## VII ԴԱՍԱՐԱՆ

### I ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ներածություն — անփոփոխ:

1. Նախնական տեղեկություններ ելեկտրականության մասին: Դուրս հանել կուլոնի ուժնքը, ելեկտրական գաշտը, ուժային գծերը, կոնդենսատորը:

2. Ելեկտրական եներգիայի փոխակերպումը ֆիմքանի լեկը ընդհանակառ:

Դուրս հանել քիմիական փորմուլաները: Ելեկտրականության ամենագլխավոր էլեկտրառումները քիմիական արդյունաբերության մեջ (մինչև բաժնի վերջը), անցնել տեղեկության կարգով:

3. Ելեկտրական հոսանքի ուժնեները:

Դիտողություն. — Նկատի ուսենալով, վոր պոտենցիալի գաղափարը դուրս է հանված առաջին բաժնից, ուստի շղթայի մասի լարվածքը համարել այդ մասում, անցնելիք մեկ կուլոն ելեկտրականության կատարած աշխատանքի պատճառը, ընդառակորեն ոգտագործելով հիդրավլիկական և ոգային յերկույթներից վերցրած անալոգիաներով:

4. Ելեկտրական եներգիայի փոխակերպումը ջերմայինի:

Թողնել անփոփոխ:

5. Մագնիսական լեկ ելեկտրամագնիսական լեռնալիքները:

Թողնել անփոփոխ:

6. Ելեկտրական եներգիայի փոխակերպումը մեխանիկականի:

Դուրս հանել լարորատորական աշխատանքը:

Գաղափար տալ հար հոսանքի ելեկտրոմոտորի կառուցվածքի մասին, առանց մասրամասն ուսումնասիրելու այդ կառուցվածքը:

7. Մեխանիկական եներգիայի փոխակերպումը ելեկտրականի:

Գաղափար տալ դիմացը և տրանսֆորմատորի կառուցվածքի մասին: Ելեկտրական կայարանի սինեման և հներգեալիք բազայի զարգացումն անցնել միայն տեղեկության կարգով (կամ ընթերցանությամբ):

8. Ռադիոտեխնիկայի հիմունքները:

Ամբողջ բաժինը դուրս հանել:

## II ՀՈՒՅԱ

Բնելման հարցերում «որենք» բառը փոխարինել «յերկույթ» շատով: Լույսի «դիսպերսիա (տարբալուծման) հարցից» դուրս հանել «ճառագայթային և ներդիայի փոխակերպումն այլ եներգիայի»: Լույսի ջերմային և քրմիական աղղեցությունները:

## VIII ԴԱՍԱՐԱՆ

VIII դասարանի ծրագիրը մնում է անփոփոխ:

## IX ԴԱՍԱՐԱՆ

(Վեցորրեակում 3—2 ժամ)

IX դասարանի ծրագրի փոփոխությունները:

I. Մոլեկուլարին յիրնութերը պինդ, հեղուկ և գազային մարմիններում:

Առաջին հատվածը վերածել յերեք հարցերի:

1. Մոլեկուլային-կինստիկ տեսության հիմունքները:

2. Գազերի հատկությունները: Այս բաժնի մեջ մոցնել՝ գազի մոլեկուլների շարժումը, գազերի շարժումը և ավելացնել Բոլ-Մարիոտի որենքը, միացնելով Գեյ-Լյուսակի որենքը: Զերծատիճանների բացարձակ շկալը: Կլասիկը որոնի հավասարումը: Դուրս հանել՝ «գազերի կինստիկ տեսության հիմնական հավասարման դուրս բերելը և գազային հաստատուն մեծություն հաշվումը» (սահմանափակվելով տվյալ ֆիզիկական յիրնութիւնի պարզաբնութով):

3. Հեղուկ և գազային մարմինների հատկությունները:

Սրան ավելացնել ծրագրի 2 հատվածի բովանդակությունը:

## II ԶԵՐՄՈՒԹՅՈՒՆ

1. Մարմինների ընդարձակումը ջերմությունից:

2. Կալորիմետրիայի և աղբեղատայի վիճակի փոփոխության կալորիմետրական հավասարման կրկնողությունը և խորացումը:

3. Գոլորշիներ:

4. Գոլորշու և գազի աշխատանքը:

Դուրս հանել աշխատանքի դրաֆիլիները և դիագրամները:

## X ԴԱՍԱՐԱՆ

X դասարանի ծրագրի փոփոխությունները:

5-րդ հատվածից դուրս հանել՝ գազային լոների արագությունը, տարրական լիցքի վորոշելու բառ Սիլիկենի:

8-րդ հատվածից դուրս հանել՝ գազափար լույսի ինտերֆերնշիալ մասին, լույսի դիֆրակցիան, դիֆրակցիոն ցանցը, լույսի պոլյարիզացիան:

Նկատի ունենալով, վոր X դասարանի աշակերտները VII դասարանում սովորելիս ծրագրի փոփոխության պատճառով չեն կարողացել պատշաճ կերպով մշակել ելեկտրականության և լույսի բաժինները, ուստի X դասարանում առաջին կիսամյակում ավելացրած և մեկ ժամ VII դասարանի ծրագիրը կրկնելու համար: Այս կրկնությունը պետք է համատեղել X դասարանի համապատասխան բաժինների հետ:

Վորովչետև, «Փալելի և Պերիշկինի» ֆիզիկայի II մասն առաջին կիսամյակում լույս չի տեսնի, ապա Փիզիկայի դասավանդման համար հանձնարարվում և ոգավել Սովորվի Փիզիկայի ուսումներին դասուգը լիրկորդ մասից: Ելեկտրականության առաջին թեման, «Ելեկտրական դաշտ»-ը ուսումնասիրելիս այդ գրքի առաջին գլուխի §§ 1—8 հետո անցնել իններորդ գլուխի «Ելեկտրական դաշտ»-ին:

Յերկորդ թեմայի «Ելեկտրական հասանքի որենքների» համար պետք է վերցնել § 9 առաջին, յերկորդ և յերրորդ գլուխները:

Յերրորդ թեմայի համար—«Մագնիսական դաշտ»-ը չորրորդ գլուխի:

Չորրորդ թեմայի համար—«Ելեկտրոմագնիսատյին դաշտ»-ը հինգերորդ գլուխի §§ 61—69:

Հինգերորդ գլուխի համար «Ելեկտրական հաղորդականությունը հեղուկներում»—ութերորդ գլուխը:

Վեցերորդ թեմայի համար—«Մագնիսականի վություն» §§ 201, 202:

Յոթերորդ թեմայի համար—«Փոփոխական հոսանք, ելեկտրական ալիքներ»— §§ 70—74, 204—217:

Լույսն ուսումնասիրելիս կարելի չեն ոգավել գրքի գլուխների դասավորության կարգով, վորը հիմնականում համընկնում է ծրագրի կարգի հետ:

Ասդարձիության ծրագիրն ընթացի 1934-35  
ուս. տարվա համար

(Փոփոխություններ)

Տպագրած գաղտնաբառ:

Հասարակածային կոորդինատներ ուղիղ  
բարձրացում և թեքում (առաջըն բաժ-  
նում):

Լուսատուների յերկրից ունեցած հեռա-  
փոռության վարոշումը և նրանց մեծու-  
թյունը: (Ալ գլուխ)

Դարձնի մակընթացության հիպոթեզը:  
(Ալ գլուխ)

Գաղափար պրեցիսիայի մասին:

Ապեկարային կլասսիֆիկացիա ջերմու-  
թյան:

Պետք ե այսօպ կո՞ ի ե լ

Հասկացողություն հասարակա-  
ծային կոորդինատների մասին:

Դուրս հանել:

Տեղափոխել IV գլուխը «Կանո-  
լապլասի հիպոթեզից» հետո:

Դուրս հանել:

Հասկացողություն աստղերի և  
նրանց Փիդիկո-քիմիական կա-  
ռուցվածքի մասին:

ա 1, ա 4 և 1 դիտումները կատարել արտազրոցական  
պարապմունքների ժամանակ IX դասարանում, Փիդիկայի ժամերի  
հաշվին. պիտք ե յուրաքանչյուր քառորդի սկզբին 1 ժամ հատ-  
կացնել այդ նպատակի համար:

ա 4 և ա 6 դիտումների հրահանգմանը և անմիջականորեն  
աշակերտների հետ միասին մեկական լիրեկո (2 ժամ) հատկաց-  
նել ասեն մի քառորդում ա 1 և ք 1 դիտումների համար:

Դիտուրյուններ բուսաբանության, կենդանաբանության, մարդու  
անատոմիայի յեկ Ֆիզիոլոգիայի, եվոլյուցիոն տեսության ու յերկրա-  
բանության ծրագրերի վերաբերյալ 1934-35 ուս. տարվա համար  
(վոչ լրիվ մրջն. յեկ միջնակարգ դպրոցի)

Հինգերորդ դասարանի ծրագրում կատարել հետեւյալ փոփո-  
խությունները.

1. «Ըստհանուր ծանոթություն ծաղկավոր բույսերին» բաժ-  
նից դուրս հանել «բույսերի վերերկրյա և ստորերկրյա ձմեռող  
մասերը» Զմեռող բողբոջներ, նրանց կազմությունն ու դերը բույսեր

ձմեռելու համար: Միաժամ, յերկամյա և բազմամյա բույսեր»:  
(Կեխսաբանության ծրագիր. 1933 թ., եջ 10):

Կատարված կրծատման հաշվին անհրաժեշտ ե ավելի ժամա-  
նակ հատկացնել բույսերի բջջային կազմությանը, մտցնելով  
գործնական աշխատանք միկրասկոպով կամ դեմոնստրացիա-  
ներով:

2. «Սերմը և նրա ծիլերը» բաժնից դուրս հանել «հատիկի  
նախացանքային մշակման նոր ձեր—«յարովիզացիա» մասը և  
տանել «Ամփոփման բաժին» (տես եջ 15):

3. «Տերմածությունը, կաղված լուսավորման պայմանների հետ» մասը  
(եջ 13):

4. «Ամփոփում» բաժնից դուրս հանել ամբողջ վերջին ար-  
գացը—«կապը բույսի զարգացման լիրակութների և միջավայրի  
արտաքին պայմանների միջև: Գոյամարտը բուսական... և այլն  
միջև «Դեմոնստրացիա» բաժինը—(եջ 15-16):

5. «Նախապատրաստություն՝ ամառային աշխատանքների  
համար և հաշվառում» բաժնից «հասկացողություն տեսակի, ցեղի  
և ընտանիքի մասին» հատվածը (եջ 16) տանել VI դասարանի  
«Բուսական աշխարհի հիմնական խմբերը» բաժինը (եջ 18):

VI դասարանի բուսաբանության դասընթացն ավելի սիս-  
տմատիկ գարձնելու համար, անհրաժեշտ ե ամառային աշխա-  
տանքների ամփոփումից հետո անմիջապես անցնել «բուսական  
աշխարհի հիմնական խմբերը» բաժինը, ապա նոր անցնել «կուլ-  
տուրական բույսերի բիոլոգիան» թեսան: «Բուսական աշխարհի  
հիմնական խմբերը» բաժնում անհրաժեշտ ե հասկացողությունն  
տալ բույսերի սիստեմատիկայի և հիմնական տակտոնոմետրիկ միա-  
վորների մասին (տեսակ, ցեղ, ընտանիք): Անհրաժեշտ ե նաև  
առանձին ուսումնական ժամեր հատկացնել գործնական աշխա-  
տանքներին ծաղկավոր բույսերը գորշելու համար: Դա չափա-  
զանց կարեոր ե բույսերի սիստեմատիկայի կուրսը կոնկրետաց-  
նելու և խորացնելու համար: Մրագրում և դասագրքում այդ բա-  
ժինն անբավարար ե մշակված, ուստի մինչև լժեկ-ի կողմից նոր  
ծրագիր հրատարակվելն, անհրաժեշտ ե 1934-35 ուս. տարուն  
աշակերտության լրացրոցիչ կերպով ծանոթացնել հետեւյալ ծաղ-  
կավոր բույսերի ընտանիքներին—խաչածաղիկներ, խոտայիններ,

վարդածաղիկներ, հովանոցավորներ, թիթեռնածաղիկներ, հացարուսեր, բարդ ծաղիկներով, լրածաղիկներ և այլն:

Դաստիոնների համար հանձնաբարվում ե հետեւյալ ոռուսերեն ձեռնարկը Տալեև Բ. Ի. «Օпределитель высших растений»:

«I դասարանում կենդանաբանության թասընթացից «Ներածության» բաժնից գուրս հանել հետեւյալ մասը՝ «հասկացողություն յերկրաբանական շերտերի ու ժամանակի միավորների մասին (հին, միջին, նոր և նորագույն երաներն ու դիմավոր դարաշրջանները) (եջ 20):

Երկրաբանական դարսչըրջանների հիմունքների մասին համառոտ ծանոթություն պետք ե տալ անվողնաշար կենդանիների և վողնաշարավորների դասի պատմական զարգացումն ուսումնասիրելու հետ զուգընթացաբար, ոգտագործելով ծռւզմերի «Կենդանաբանություն» ստաբիլ գասագիրքը (եջ 4—9):

«Հոտվածութանիներ» բաժինը փոխադրվում ե VII դասարան: Նկատի ունենալով, վոր անցյալ ուսումնական տարում այդ բաժինը լավ չեր մշակված, ուստի անհրաժեշտ ե VII դասարանում վերստին այդ թեման կրկնել, կանգ առնելով դիմավորագետ միջատների վրա, աշակերտներն ամառալին դիտողություններ և ամստային աշխատանքներն ամփոփելու կապակցությամբ:

VII դասարանում «Յեղրափակում» բաժնում սահմանափակվել միայն առաջին թեմայի ուսումնասիրությամբ. (որգանիզմների զարգացման պատմության մեջ առաջացած յուրաքանչյուր նոր ձև նախորդ ձեր զարգացման աստիճանն ե) (եջ 29):

VIII դասարանի «Վուկրամկանալին սիստեմը» բաժնից մկանալին աշխատանքների իրմիզմի մասին թեման պետք ե դուրս հանել, վորպես անմատչելի և անհասկանալի աշակերտների համար:

VIII դասարանի դասընթացն անցնելիս պետք ե զեկավարվել ծրագրով, այլ վոչ թե դասագրքով—(Կարանով—«Մարդու անատոմիան և Փիզիոլոգիան»):

IX դասարանում «Եվոլյուցիոն տեսությունն» անցնելուց առաջ պետք ե դնել «յերկրի կեղեկի պատմության հիմունքները» թեման 10-րդ դասարանի դասագրքի 3-րդ ըաժինը:

X դասարանում մացվում ե յերկրաբանության և հանքարանության հետեւյալ բաժինները:

1. Հանքարանության հիմունքները:

2. Յերկրաբանական պլոցեսների և նրանց միջոցով առաջած ազատների ուսմունքի հիմունքները:
3. Յերկրի կեղեկի պատմության հիմունքները:

### Ժ ա մ ե ր ի բ ա շ ի ու մ ը

V դասարան.—Ներածություն 1 ժամ, ընդհանուր ծանություն ծաղկավոր բույսերի հետ—6 ժամ (ժամերի վեցին ավելացված ե բույսերի բջիջների ուսումնասիրության գծով փորձեր և եքսկուրսիաներ կատարելու համար). «Սերմը, նրա աճումը»—12 ժամ. «Արմատ»—12 ժամ. «Տերև»—14 ժամ. «Ցողուն»—8 ժամ. «Բույսի աճումը և աճան կանոնավորումը»—6 ժամ. «Մաղկավոր բույսերի բաղմացումը»—11 ժամ. «Յեղրափակում»—5 ժամ. «Ամռան աշխատանքների նախապատրաստումը»—3 ժամ. Անցածի կրկնության համար—12 ժամ:

### VI ԴԱՍԱՐԱՆ

I Բ ուսաբանությունն անցնում էն առաջին  
կիսամյակում

Առաջին կիսամյակում ժամերը բաշխվում են հետեւյալ կերպ:

1. Ամառային աշխատանքների արդյունքների ամփոփում—2 ժամ:
2. Բուսական աշխատի նիմենական խմբակները—24 ժամ:
3. Կուտուրական բույսերի կենսաբանությունը—8 ժամ:
4. Կրկնություն և հաշվառում—4 ժամ:

II Կ իսամյակում սկսվում ե կենդանաբանությունը

Ժամերը	Կիսամյակում բաշխվում են հետեւյալ կերպով.
1. Ներածություն	3 ժամ
2. Միաբջիջ որգանիզմներ	6 »
3. Մարդկարդ բաղմաբջիջ որգանիզմներ	6 »
4. Վորգեր	8 »
5. Փափկամարմիններ (մոլյուսկներ)	5 »
Կրկնություն	8 »

## VII ԴԱՍԱՐԱՆ

Ժամերը բաշխվում են հետևյալ կերպով.	
1. Կրկնություն և հոգվածոտիներ . . . . .	8 ժամ
2. Զկներ . . . . .	10 »
3. Յերկենցաղներ . . . . .	5 »
4. Սողուններ . . . . .	6 »
5. Թռչուններ . . . . .	15 »
6. Կաթնասուններ . . . . .	19 »
7. Յեղրափակում . . . . .	3 »
8. Կրկնություն . . . . .	8 »

VIII դասարանում—Մարդու անատոմիան և ֆիզիոլոգիան.

Ժամերի բաշխումը մնում է նույնը:

IX դասարան—Եվոլյուցիոն տեսության ուսմունքը.	
1. Ներածություն. Դարվինի նախորդները . . . . .	3 ժամ
2. Դարվինիզմ . . . . .	28 »
3. Ժառանգականության ուսմունքի հիմունքները . . . . .	22 »
4. Մարդու ծագումը . . . . .	10 »
5. Կյանքի ծագումը . . . . .	6 »
6. Կրկնություն . . . . .	5 »

Դիտություններ Ֆիմիայի ծրագրի վերաբերյալ, 1934-35  
ուս. արվա համար

VI դասարանից քիմիայի դասընթացը դուրս է հանվում և  
քիմիայի ուսումնասիրությունը միջնակարգ դպրոցում սկսվում  
է 7-րդ դասարանից:

## VII ԴԱՍԱՐԱՆ

1. VI դասարանում անցած նյութի կրկնությունը (16 ժամ)
1. Առոմամոլեկուլարին տեսություն. Քիմիական լեզու. Հաշիվներ. (Վերխովակի. ստարիլ դասագիրք—առաջին մաս, գլուխ V III ամբողջովին).
2. Ռքմիդացում և վերականգնում (ստարիլ դասագիրք—

Վերխովակի. §§ 5, 9, 10, 11, 12 — անդաման կատարելով համապատասխան փորձեր:

2. Ուօփիդներ, բրուներ, նիմֆեր, աղեր (30 ժամ) (տես 1933 թ. ծրագիրը—եջ 50—Վերխովակու դասագրքեր; 1 մաս—գլուխ V—ամբողջովին, II մաս I գլուխն ամբողջովին):
3. Քլոր և ալկալիական մետաղներ (18 ժամ), (ծրագիր եջ 52), դասագիրք II մաս, II գլուխ ամբողջովին):
4. Հալորիդներ (8 ժամ) (տես 1933 թ. ծրագիր եջ 53, դասագիրք Վերխովակու II մաս, III գլուխն ամբողջովին):

## VIII ԴԱՍԱՐԱՆ

VII դասարանում անցած նյութի կրկնություն (16 ժամ): Կատարել համապատասխան փորձեր:

1. Հալորիդներ. Քլոր. Քլորաջրածնի հատկությունները և ստանալու յեղանակը. բրոմ, լող, ֆաոր.
2. Ծծումբ. ծծմբի հատկությունները. Ծծմբաթթվի աղերը. ծծմբային անհիդրիտ և ծծմբային թթու. Ծծմբաթթվի աղերը. Ծծմբաջրածին և սուլֆիդներ. (Ստարիլ դասագիրք. II մաս, գլուխ V):

3. Ազոս յեկ ֆոսֆոր. Ազոտի հատկությունները և նրա նշանակությունը կենդանիների և բույսերի համար. Ամմոնիակ: Ամմոնիումի աղերը. Ազոտի և թթվածնի անմիջական միացումը. Ազոտի ոքսիդները. Ազոտական թթվի աղերը. Ամմոնիակի ոքսիդացմանը ազոտական թթու ստանալը: Քիմիական եներգիա:

Ֆոսֆորի հատկություններն ու ստացումը. Ֆոսֆորաթթուներ. Անբանց աղերը. Արհեստական ֆոսֆորային պարարտանցութեր. Ազոտի խումբը: (Ստարիլ դասագիրք, II մաս գլուխ VI, VII):

Կրկնելիս առանձին ուշադրություն պետք է դարձնել հատկադեպ այն գլուխներին, զորոնք այս կամ այն դաստառով անցած ուս. ա. ալյունքն VII դասարանում լավ չեն մշակվել:

4. Ածխածին և սիլիցիում (20 ժ.) (տես VII դաս. ծրագիրը և ստարիլ դասագիրք, III մաս I և II գլուխներն ամբողջովին):
5. Տարրերի պարբերական սիստեմը և գաղափար նյութի

գազմության մասին. (24 ժամ). (տես VIII դասարանի ծրագիրը և ստաբիլ դասագիրք III մաս, գլուխ IV):

6. Լուծույթներ. Ելեկտրոլիտիկ դիստոցման տեսությունը (16 ժ.): Լուծման պրոցեսը: Դիֆուզիայի յերկույթները: Լուծման գործակիցը լուծույթների կոնցենտրացիան: Եմալիրիկ մոլյար և նորմալ լուծույթներ:

7. Ելեկտրոլիտների և վոչ ելեկտրոլիտների լուծույթները: Բնեռային միացությունների քալքայումը յոների: Գաղափար դիստոցման աստիճանի մասին: Քիմիական ռեակցիաների բացատրությունը յոնների տեսության տեսակետից:

8. Հասկացողություն դիսպերս սիստեմների մասին (տես VIII դաս, ծրագիր. հջ 16):

## IX ԴԱՍԱՐԱՆ

Որգանական հիմիա. տես IX դասարանի ծրագիրը հետևելալ փոփոխություններով. I քեմա՝ «Որգանական քիմիայի առարկան» 2 ժամ մի ժամի փոխարեն: II թեմայից դուրս հանել մետիլ սպիրտի քիմիական հատկությունն ու կառուցվածքային ձևը: IV թեմայի ժամերը 14-ից դարձնել 18. VI թեմայի ժամերը 8-ից դարձնել 6. VII թեմայի ժամերն 8-ից դարձնել 6:

Տեխնոլոգիական հարցերից անհրաժեշտ և առանձին ուշադրություն դարձնել նավթի մշակման և կոկսորենզոլ արտադրության հարցերին:

## X ԴԱՍԱՐԱՆ

1. Նյութի կազմվածքը՝ (6 ժամ):

Նախկին դասարաններում անցած նյութի կրկնույթյուն: Առումամոլեկուլային տեսությունը: Ատոմային և մոլեկուլար քաշի վորոշումը: Ատոմների կառուցվածքը: Գաղափար բնեռային և վոչ բնեռային միացումների մասին: (Ստաբիլդասգիրք I մաս, գլուխ VII և III մաս, գլուխ IV):

2. Ակնարկ պարբերական սիստեմի տարրերի մասին ըստ խրմակի (14 ժամ):

(Անցած տարիներում մշակած նյութերի կրկնույթյուն):

Հալոյիդներ. (ստաբիլ դասագիրք, II մաս, գլուխ I § 2, 4, 5 և գլուխ III):

Ծծմբի խումբ (դասագիրք II մաս, գլուխ V §§ 1, 4, 5, 6, 10, 13):

Ազոտի խումբ (դասագիրք II մաս գլուխ IV §§ 1—7, 12, գլ. VII §§ 1, 2, 6):

Ածխածնի խումբ (դասագիրք III մաս, գլ. I §§ 1, 3, 6, 7, 9, 10, գլուխ II §§ 1, 3, 4):

Տարրերն անցնելիս պետք եւ առանձին ուշադրություն դարձնել տարրերի քիմիական հատկությունների վրա, ցուցադրելով համապատասխան փորձեր:

3. Լուծույթներ (15 ժամ):

Լուծման պրոցեսը: Դիֆուզիայի յերկույթը լուծման պրոցեսում: Լուծելիության գործակիցը: Հագեցած և գերհազեցած լուծույթներ: Լուծույթների կոնցենտրացիան եմպիրիկ մոլյար և նորմալ լուծույթներ. (ստաբիլ դասագիրք. մաս II, գլուխ IV):

4. Ելեկտրոլիտիկ դիստոցման տեսությունը 10 ժամ: Ելեկտրոլիտների և վոչ ելեկտրոլիտների լուծույթները: Բնեռային միացությունների յոնների քալքայվելու պրոցեսը: Քիմիական ռեակցիաների բացատրությունը յոնացին տեսության տեսակետից. փոխանուրման ռեակցիա, չեղոքացում, հիդրոլիզ, ոքսիդացում, և վերականգնում:

Ելեկտրոլիզի պրոցեսը, վորպես ոքսիդացնող և վերականգնող պրոցես:

5. Մի քանի անիոնների և կատիոնների վորակական ռեակցիան (17 ժամ)  $\text{CaSO}_4$ ,  $\text{Co}_3$ ,  $\text{SO}^{2-}$ ,  $\text{Na}^+$ ,  $\text{Mg}^{2+}$ ,  $\text{Ba}^{2+}$ ,  $\text{Ca}^{2+}$ ,  $\text{Sr}^{2+}$ ,  $\text{Al}^{3+}$ ,  $\text{Fe}^{2+}$ ,  $\text{Fe}^{3+}$ ,  $\text{Cu}^{2+}$ :

Միացն աղի վորակական անալիզը (6 ժամ):

6. Քանակական խնդիրներ 12 ժամ:

Թթվի և ալկալիների կոնցենտրացման վորոշումը տիտրելով: Էլատրելով վորոշել յերկաթի արջասպի մեջ պարունակվող յերկաթի քանակը: Արծաթյա դրամում վորոշել արծաթի տոկոսը: Կառելով վորոշել յերկաթի քանակը յերկաթալարում (այն գորոշներում, վորտեղ անալիտիկ կամք կար)

1934-608

11

27924

2 P T